

Հաստատված է՝  
Հյուսիսային համալսարանի  
գիտական խորհրդի  
2016 թ. հունիսի 21  
նիստում (արձանագրություն N 18)  
Բ. Մակիջյան



## ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հյուսիսային համալսարանն (այսուհետ՝ Համալսարան) իր ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականությունը մշակել է Համալսարանի կանոնադրությանը, Համալսարանի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը, Համալսարանի ներքին իրավական ակտերին և Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:
2. Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմնական ուղղություններն են՝
  - 1) ֆինանսական ռեսուրսների պլանավորում՝ ֆինանսական նախահաշվի կազմում,
  - 2) ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխում,
  - 3) ֆինանսական ռիսկերի կանխատեսում և վերահսկում,
  - 4) այլընտրանքային ֆինանսական հոսքերի ապահովում,
  - 5) ֆինանսական արդյունքների գնահատում և ռազմավարության մշակում:
3. Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարմանն ուղղված հիմնական գործառույթներն են՝
  - 1) Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման նպատակադրմամբ՝ ապահովել կրթական գործընթացի անընդհատությունը՝ ֆինանսական միջոցների հավաքագրման և բաշխման ճանապարհով,
  - 2) ֆինանսական միջոցների արդյունավետ և ռացիոնալ օգտագործում,
  - 3) ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների կազմում, արդյունքների գնահատում,
  - 4) ֆինանսական, նյութական և տեխնիկական ռեսուրսների հասցեականության ապահովում սովորողներին և աշխատակազմին:
4. Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարումը համակարգվում է Համալսարանի մասնակիցների ժողովի կողմից, որը՝
  - 1) հաստատում է Համալսարանի բյուջեն,



- 2) ավելացնում կամ նվազեցնում է կանոնադրական կապիտալի չափը,
- 3) հաստատում է Համալսարանի տարեկան հաշվապահական հաշվեկշիռը,
- 4) ընդունում է որոշում Համալսարանի ձեռք բերած շահույթը և կրած վնասները հիմնադիրների միջև բաշխելու վերաբերյալ,
- 5) ընդունում է որոշում Համալսարանի կողմից արժեթղթերի (պարտատոմսերի) թողարկման մասին,
- 6) ընդունում է որոշում ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքներ (խոշոր է կոչվում այն գործարքը, որի առարկայի արժեքը կնքման պահին գերազանցում է Համալսարանի գուտ ակտիվների մեծության մեկ քառորդը) կատարելու մասին:

5. Համալսարանի ֆինանսական ռեսուրսների ընթացիկ կառավարումը իրականացվում է Համալսարանի ռեկտորի կողմից, ով՝

- 1) ղեկավարում է Համալսարանի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական և միջազգային գործունեությունը,
- 2) տնօրինում է Համալսարանի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,
- 3) Համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Համալսարանի բյուջեի նախահաշիվը,
- 4) տարեկան հաշվետվություններ է ներկայացնում Համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովին,
- 5) Համալսարանի անունով բանկերում կարող է բացել հաշվարկային և այլ հաշիվներ,
- 6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և համալսարանի այլ կառավարման մարմիններին չվերապահված լիազորություններ:

6. Համալսարանի սեփականությունը կազմում են նրա բալանսում գտնվող շենքերը շինությունները, սարքավորումները, գույքը և մնացած ունեցվածքը:

7. Համալսարանն իր կանոնադրության համաձայն իրավասու է՝

- 1) կազմակերպել հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և լրացուցիչ կրթություն,
- 2) իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ,
- 3) ծավալել հրատարակչական, տպագրական գործունեություն և դրա արդյունքների իրացում,
- 4) կազմակերպել օտարերկյա քաղաքացիների նախապատրաստական և բարձրագույն կրթություն,
- 5) կազմակերպել համակարգչային ծրագրերի, հաշվապահական և օտար լեզուների ուսուցում,



- 7) կազմակերպել սովորողների և աշխատողների սննդի, հանգստի հարցերը,
- 8) մատուցել վճարովի կրթական ծառայություններ (վճարովի ուսուցում և այլն),
- 9) իրականացնել ֆինանսների կառավարում՝ ներառյալ աշխատավարձի, կրթաթոշակի վճարում, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողական նպաստների տրամադրում, Համալսարանի պահպանմանն ու զարգացմանը և գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարում,
- 10) սեփականության կամ օգտագործման նպատակով իրեն պատկանող գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության հանձնել,
- 11) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

8. Համալսարանի ֆինանսական միջոցների ձևավորման հիմնական աղբյուրը սովորողների ուսման վարձի գումարներն են:

9. Համալսարանի ֆինանսական միջոցները կարող են գոյանալ նաև՝

- 1) Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում,
- 2) միջազգային և տեղական դրամաշնորհային ծրագրերի մասնակցելու արդյունքում,
- 3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումների հաշվին, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, կտակած գույքը,
- 4) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պետական պատվերի, ինչպես նաև այլ նպատակների համար հատկացված միջոցների հաշվին,
- 5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

10. Համալսարանի ֆինանսական միջոցներն օգտագործվում են նրա ամենօրյա կենսագործունեության ապահովման, Համալսարանի ուսումնականության բազայի ամրապնդման համար:

11. Համալսարանում տարվում է համապատասխան գործավարություն, հաշվապահական ու վիճակագրական հաշվառում, սահմանված ձևով կազմվում ու ներկայացվում են ամսական, եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ: